«ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՄՄԱՌՎ-ՀՄԱԾՁԲ-22/1-1

ք. Դիլիջան «22» 02 2022թ.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը ի դեմս տնօրեն՝ Գ. Սարգսյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սննդի պատրաստման և մատուցման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.5 պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները,

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 186300000 (մեկ հարյուր ութսունվեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4.3 Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի

կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին է ներկայացնում համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1	ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5
«Արարատբանկ» ԲԲԸ	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510042359830100	Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 07619891	ՀՎՀՀ 00851011
	տնօրեն՝ Գայանե Մարգարյան
տնօրեն Գ. Մարգարյան	տնօրեն Գ. Մարգարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 22 » 02 2022թ. կնքված
ՄՄԱՌՎ-ՀՄԱԾՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Ծառայության						Մատուցման	
	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	գումար (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Հասցեն	Ժամկետը
1	55321100	Մննդի պատրաստման և մատուցման ծառայություն*	Մննդի պատրաստման և մատուցման ծառայության Նկարագիրը ներկայացված է ստորև ՄՄԱՌՎ-ՀՄԱԾՁԲ-22/1-ծածկագրով պայմանագրի Հավելված 1.1-ով:	դրամ	186300000	1	ՀՀ, Դիլիջան քաղաք, Պարզ լճի 5, 24/1 և 26/1	Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ մինչև 30.12.2022թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ լճի 5, 24/1
«Արարատբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15100423598301 00
ՀՎՀՀ 07619891

տնօրեն _____ Գ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 00851011

տնօրեն _____ Գ. Մարգարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 22 » 02 2022թ. կնքված
ՄՄԱՌՎ-ՀՄԱԾՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1. Սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնողը «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի ճաշարանում և դաշտային պայմաններում սաներին և անձնակազմին պետք է ապահովի ոչ պակաս օրական երեք անգամյա տաք սննդով:

2. Անձնակազմի սննդի մատուցումը պետք է իրականացվի ՀՀ կառավարության 03.12.2015թ. N 1456 որոշմամբ հաստատված N5 հիմնական ապահովման չափաքանակի շրջանակներից ոչ պակաս և սննդամթերքի փոխարինման շրջանակներում՝ պահպանելով տվյալ տարիքային խմբի համար սահմանված կալորիականությունը:

3. Անձնակազմին մատուցվող ճաշատեսակները, աղցանները և խավարտները պետք է լինի՝

նախաճաշին՝

- Երկու տեսակից ոչ պակաս խավարտ, մշտապես պահպանելով բազմազանությունը,
- թարմ կաթնամթերք, ջեմ, մեղր, ձու, կարագ
- շիլա
- թեյ/սուրճ
- մսային խորտիկ
- սեզոնային թարմ միրգ
- տեղում պատրաստված խմորեղեն և հաց /մատնաքաշ/, լավաշ, բուխանկա կամ բատոն,

ճաշին՝

- երկու տեսակից ոչ պակաս ապուր,
- երեք տեսակից ոչ պակաս խավարտ,
- երկու տեսակից ոչ պակաս աղցան,
- երկու տեսակից ոչ պակաս մսեղիք,
- սեզոնային թարմ բանջարեղեն
- տեղում պատրաստված հաց /մատնաքաշ/, լավաշ, բուխանկա կամ բատոն,
- կոմպոտ /հյութ/ կոլա – ֆանտա - սպրայթ/

ընթրիքին՝

- երկու տեսակից ոչ պակաս խավարտ, մշտապես պահպանելով բազմազանությունը,
- մեկ տեսակից ոչ պակաս ապուր,
- շաբաթական մեկ տեսակից ոչ պակաս ձուկ, բացառությամբ սկումբրիա, սարդիլենա, կարաս, հաստաճակատ տեսակներից:
- մեկ տեսակ մսային ուտեստ
- սեզոնային թարմ բանջարեղեն
- երկու տեսակից ոչ պակաս աղցան
- տեղում պատրաստված հաց /մատնաքաշ/, լավաշ, բուխանկա կամ բատոն,
- թեյ, կոմպոտ, մածուն

Չափաքանակով նախատեսված մնացած սննդատեսակների մատուցումը պետք է իրականացվի օրվա կարգացուցակով նախատեսված սննդի մատուցման ժամերին՝ օրական **միջինը 270 հոգու հաշվարկով**:

Ծառայությունը պետք է մատուցվի 8 ամսվա համար (փետրվար-մայիս և սեպտեմբեր-դեկտեմբեր)՝ **միջինը 230 օրվա հաշվարկով**:

Մատակարար կազմակերպությունը վարժարանին պետք է ապահովի շուրջօրյա խմելու մաքուր ջրով՝ ջրի դիսպենսերների միջոցով՝ նվազագույնը 8 հատ, որից առնվազն երկուսը ճաշարանում: Անհրաժեշտության դեպքում դրանց քանակը կարող է ավելացվել ևս 4 հատ դիսպենսերով: Ջրի դիսպենսերների տեղադրման վայրերը մատակարար կազմակերպությունը պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ:

4. Շաբաթվա յուրաքանչյուր ուրբաթ օրը ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է կազմի հաջորդ շաբաթվա 7 օրերի համար սննդի բաշխման ձևաթերթիկը և ներկայացնի «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի պետի հաստատմանը: Բաշխման ձևաթերթիկում յուրաքանչյուր փոփոխություն պետք է կատարվի վարժարանի պետի թույլտվությամբ:

5. Դաշտային պայմաններում սննդի պատրաստման և մատուցման ժամանակ մսեղենը և ձկնեղենը կարող է փոխարինվել մսի պահածոյով, աղցանը՝ ճավարեղենով կամ այլ բանջարեղենով, այն օգտագործելով ճաշատեսակների մեջ:

6. Յուրաքանչյուր օր, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը պետք է իրականացվի «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի պետի կողմից նախորդ օրը կազմված և հաստատված հայտի հիման վրա, որտեղ առանձին-առանձին նշվելու են նախաճաշի, ճաշի և ընթրիքի ընթացքում փաստացի սնվողների քանակները: Հետագայում մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվելու են ըստ փաստացի սնվողների քանակների:*

7. Սննդի պատրաստման և մատուցման ծառայության պայմանագրի կնքումից անմիջապես հետո վարժարանում առկա ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումները, տեխնիկական միջոցները և գույքը մինչև պայմանագրի գործողության ավարտը անհատույց տրամադրվում է ծառայություն իրականացնող կազմակերպությանը:

8. Ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումների վերանորոգումը, սպասարկումը, ինչպես նաև ճաշարանախոհանոցային սպասքի և գույքի թարմացումը իրականացվում է ծառայություն մատուցող կազմակերպության կողմից:

9. Պայմանագրի գործողության ավարտից հետո ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումները և գույքը պատվիրատուին հանձնվում է սարքին վիճակում:

10. Ծառայություն մատուցող կազմակերպությունը անձնակազմի կերակրման գործընթացը իրականացնելու նպատակով, բացի պատվիրատուի կողմից տրամադրված գույքի և սարքավորումների ըստ անհրաժեշտության ճաշարանը պետք է համալրի սպասքով, գույքով, սարքավորումներով: Դրանց թարմացումը և համալրումը պետք է կատարվի ծառայություն մատուցողի կողմից:

11. Ճաշարանները իր բոլոր արտադրամասերով, պահեստային տնտեսություններով ծառայություն մատուցող կազմակերպությանը տրամադրվում է կոսմետիկ վերանորոգված վիճակում սննդամթերքի պահպանումը և սննդի կազմակերպումն իրականացնելու համար: Նշված շինությունների շահագործման ընթացքում կոսմետիկ և ընթացիկ վերանորոգումը, անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվի ծառայություն մատուցողի կողմից:

12. Դաշտային պայմաններում սննդի պատրաստման և մատուցման համար նախատեսված տեխնիկական միջոցները, դրա համար անհրաժեշտ վառելիքի ծախսը իրականացվում է սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող կազմակերպության կողմից:

13. Ճաշասեղաններն ու աթոռները կարող են տրամադրվել պատվիրատուի կողմից ծառայություն իրականացնող կազմակերպությանը, դրանց ընթացիկ վերանորոգումը և նորով փոխարինումը պետք է իրականացվի կազմակերպության կողմից: Հակառակ դեպքում մատակարար կազմակերպությունը ինքն է տրամադրում ճաշասեղաններն ու աթոռները:

14. Ճաշարանի, արտադրամասերի, սննդամթերքի և բանջարեղենի պահեստների սանիտարահիգիենիկ վիճակի պատասխանատվությունը կրում է ծառայություն իրականացնող կազմակերպությունը: Ճաշարաններում սննդամթերքի և բանջարեղենի պահեստների սանիտարահիգիենիկ վիճակը, սննդի պատրաստումը, փոխադրումը և իրացումը կազմակերպել համաձայն «Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջների» (ՍԿ և ՀՆ 2-III-4,2-01-2003):

Սննդի պատրաստման և մատուցման ժամանակ ծառայություն իրականացնող կազմակերպությունը ապահովում է պատրաստման տեխնոլոգիայի գործընթացի, սննդամթերքի որակի, ռեժիմի, ընդունման, բաղադրատոմսերի պահպանման կանոնները և պատրաստի ճաշատեսակների ելքի նորմաները, ինչպես նաև մսի և ձկան չափաբաժինների համապատասխանությունը օրենքով սահմանված նորմատիվային փաստաթղթերին՝ այդ թվում ՀՀ կառավարության 2017թ. մարտի 9-ի նիստի N 10 արձանագրային որոշման պահանջներին:

15. Սննդի մատուցումը պետք է իրականացվի օրվա կարգացուցակով սահմանված սննդի ընդունման ժամերին՝ 08:00-ին, 14:00-ին և 20:00-ին, եթե ժամերի հետ կապված փոփոխություններ լինեն, ապա պատվիրատուն նախապես կտեղեկացնի:

16. Սահմանված պայմանների խախտման դեպքում Պատվիրատուն սահմանում է թերությունների վերացման ժամկետ՝ առավելագույնը 20 օրացույցային օր: Նշված ժամանակահատվածում թերությունները չվերացնելու դեպքում, օրենքով սահմանված կարգով, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծարել պայմանագիրը:

17. Անձնակազմին հատկացվող սննդամթերքի համար սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող կազմակերպությունը սննդամթերքի վերաբերյալ պետք է ունենա որակը հավաստող և անվտանգության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր: Մատուցվող սննդամթերքը պետք է լինի բարձր որակի, առանց փոխարինիչների (օր. սերուցքային կարագ ոչ թե սպրեդ, թարմ միս ոչ թե բրիկետով սառեցրաց միս և այլն):

18. Կապված կերակրվող անձնակազմի ամենօրյա թվաքանակից սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը օրական կտրվածքով կարող է տատանվել 1-ից 500 մարդու սահմաններում:

19. Սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող անձնակազմը ենթարկվում է պարտադիր և պարբերական բժշկական զննության, համաձայն ՀՀ կառավարության 27.03.2003թ. N347-Ն որոշման:

** Սույն կետի պահանջները ապահովելու նպատակով կատարողը պարտավորվում է մատուցել ծառայությունը համաձայն ներքոնշյալ աղյուսակով սահմանված գնացուցակի՝*

Չափա-բաժնի համարը	Ծառայության անվանումը		Ծառայության ընդհանուր գինը ըստ տեսակի (Միջինը 230 օր՝ օրական միջինը 270 հոգու հաշվարկով)
1	2		3
1	Սննդի պատրաստման և մատուցման ծառայություն	նախաճաշ	55,890,000 (հիսունհինգ միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ
		ընթրիք	74,520,000 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ
		ճաշ	55,890,000 (հիսունհինգ միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ
Ընդամենը			186,300,000 (մեկ հարյուր ութսունվեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100423983010 0
ՀՎՀՀ 07619891

տնօրեն _____ Գ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 00851011

տնօրեն _____ Գ. Մարգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 2022թ. կնքված
ՄՄԱՌՎ-ՀՄԱԾՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%

Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվելու է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա վերջին աշխատանքային օրը:

Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են աճողական կարգով:

Պատվիրատուն վճարումը կատարելու է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510042359830100
ՀՎՀՀ 07619891

տնօրեն _____ Գ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 00851011

տնօրեն _____ Գ. Մարգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 2022թ. կնքված
ՄՄԱՌՎ-ՀՄԱԵՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2022թ. կնքված
ՄՄԱՌՎ-ՀՄԱՇՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

22.02.2022 թվականին կնքված N ՄՄԱՌՎ-ՀՄԱԾՁԲ-22/1-1 գնման պայմանագրի

ք. Դիլիջան «15» 03 2022թ.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը ի դեմս տնօրեն՝ Գ. Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Մարգարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 22.02.2022թ. կնքված N ՄՄԱՌՎ-ՀՄԱԾՁԲ-22/1-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 7.5 և 7.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ծառայության ձեռքբերման համար հատկացված 186300000 (մեկ հարյուր ութսունվեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված N 1-ով ներկայացված Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված «Ժամկետը» շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝ «01.02.2022թ.-ից մինչև 30.12.2022թ. ներառյալ ընկած ժամանակահատվածում»:
2. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1	ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5
«Արարատբանկ» ՓԲԸ	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 15100423598300100	Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 07619891	ՀՎՀՀ 00851011
տնօրեն Գ. Սարգսյան	տնօրեն Գ. Մարգարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«22» հունվարի 2022թ. կնքված
N ՄՄԱՌՎ-ՀՄԱԾՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագրի
«_____» _____ 2022թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ապրանքի անվանումը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ .՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Գումար (ՀՀ դրամ)
1	55321100	Սննդի պատրաստման և մատուցման ծառայություն	-	16936370	33872730	50809100	67745460	84681820	101618190	118554550	135490910	152427280	169363640	186300000	**186300000**

***Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

* Պատվիրատուն վճարումը կատարելու է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510042359830100
ՀՎՀՀ 07619891

տնօրեն_____Գ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 00851011

տնօրեն_____Գ. Մարգարյան
/ստորագրություն/
Կ.Տ